# Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

## ԵԿԵՂԵՑԱԿԱՆՔ – ԲԵՄԱԿԱՆՔ

● Շբ. 2 Յուն. — Ս. Աբգարու թագ. մերոյ: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիրս. ժամարարն էր Հոգշ. Տ. Հայրիկ Աբեղայ։

● Կիր. 3 Յուն. — Ս. Պատարագը՝ ի Ս. Յակոբ, Ս. Կարապետի խորանին վրայ մատոյց Հոգշ. Տ. Համբարձում Արք.։ Ս. Թ. Վարժարանի աշակերտութիւնը հաղորդուեցաւ։

● Բշ. 4 Յուն. — Ամեն. Սրբ. Պատրիարք Հայրը նախագահեց հանդիսաւոր նախատօնակին, որմէ ետք թափօրով և «Օրհնեցէք զՏէր» Ս. Աթոռոյ շարականի երգեցողութեամբ բարձրացաւ Պատրիարքարան։

● Գշ. 5 Յուն. — Դաւիթ մարգարէին եւ Յակոբայ Տեառնեղբօր (Տօն Առաքելական Ս. Աթոռոյս Երուսաղէմի): Առաւօտեան ժամերգութեան ատեն, Ամեն. Ս. Պատրիարք Հայրը զգեստաւորեալ բարձրացաւ Տեառնեղբօր Աթոռի պատուանդանին։ Աւագ Սեղանին վրայ հանդիսաւորապէս պատարագեց և քարոզեց Գերշ. Տ. Կիւրեղ Եպս.։ Լուսարարապետ Սրբազանը նախագահեց հանգուցեալ պատրիարքաց հոգիներուն համար կատարուած հանգստեան կարգին։

● Դշ. 6 Յուն. — Ամեն. Ս. Պատրիարքը նախագահեց Ս. Ստեփաննոսի նախատօնակին։ Բուրվառակիր Հայրերն էին Հոգշ. Տ. Կոմիտաս և Հոգշ. Տ. Արփիար Աբեղաները։

● Եշ. 7 Յուն. — Ս. Ստեփաննոսի Նախավկային: Առաւօտուն կատարուեցաւ Սարկաւագաց Հանդէսը։ Ներկայ էր Ամեն. Ս. Պատրիարք Հայրը։ Ս. Պատարագը Աւանդատան մէջ մատոյց Հոգշ. Տ. Սեւան Վրդ. Ղարիպեան։

● Ուր. 8 Յուն. — Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Գերշ. Տ. Նորայր Արքեպս.։

● Շբ. 9 Յուն. — Առաք. Պետրոսի եւ Պօղոսի: Ս. Պատարագը՝ Ս. Պետրոսի վերին մատրանին մէջ մատոյց Արժ. Տ. Ներսէս Ա. Քհ. Ճէպէճեան։

● Կիր. 10 Յուն. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրանը մէջ։ ժամարարն էր Հոգշ. Տ. Ռուբէն Վրդ.։

— Կ. վ. Ամեն. Ս. Պատրիարք Հայրը «Հրաշափառ»ով մուտք գործեց Մայր Տաճար, և նախատօնակէն ետք թափօրով բարձրացաւ Պատրիարքարան։

● Բշ. 11 Յուն. — Տօն Ս. Որդւոցն Որոտման եւ Բարեկ. պահոց Ս. Ծննդեան: Լուսարարապետ Տ. Գարեգին Արքեպս. հանդիսաւորապէս պատարագեց Ս. Գլխադրի մատրան մէջ և քարոզեց։ Ապա ամպհովանիի տակ և Կենաց Փայտի մասունքն ի ձեռին նախագահեց Մայր Տաճարին մէջ կատարուած եռադարձ թափօրին։ Յետոյ բոլորն ալ ելան Պատրիարքարան և Պատարագիչ Սրբազանէն ստացան օրհնուած նշխար։

● Եշ. 14 Յուն. — Կաղանդ: Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ պատարագեց և քարոզեց (տես էջ 33), ըստ սովորութեան, ժամօրհնող Հոգշ. Տ. Ռուբէն Վրդ.։ Յետոյ բոլորն ալ բարձրացան Պատրիարքարան, ուր Լուսարարապետ Սրբազանը՝ ի դիմաց Միաբանութեան, շնորհաւորեց Ս. Պատրիարք Հայրը։ Ս. Թ. Մանկապարտէզէն փոքրիկներ նոյնը ըրին։ Ն. Ամեն. փոխադարձեց և պատշաճ խօսքերէ ետք մէկական նարինջ բաժնեց բոլորին։

● Շբ. 16 Յուն. — Ս. Բարսղի հայրապետին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիրս. ժամարարն էր Հոգշ. Տ. Կոմիտաս Աբղ.։

● Կիր. 17 Յուն. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յակոբ, Ս. Ածածնայ խորանին վրայ։ ժամարարն էր Հոգշ. Տ. Հայրիկ Աբղ.։

● Բշ. 18 Յուն. — Ճրագալոյց Ս. Ծննդեան: Կ. ա. ժամը 10ին, Ամեն. Ս. Պատրիարք Հօր գլխաւորութեամբ, Միաբանութիւնը ինքնաշարժերու շարանով մը ճամբայ ելաւ դէպի Բեթղեհէմ։ Դիմաւորութիւնը կատարուեցաւ նախորդ տարիներու հանդիսաւորութեամբ և պայծառ ու գաղջ օդով։

---

տանց վկայից և Ոսկեանց քահանայից տօներուն առթիւ, ունեցանք անոնց յիշատակին նուիրուած երեկոյթ։ Տրց. Արամ Ալճանեան մեներգեց «Ստուգութեամբ» (Սաքիզեանց) սանդի շարականի առաջին տունը, ժառ. սան Շահին Էօզտէմիրեան կարդաց «Որք արժանաւորեցայք» (Ոսկեանց) շարականը՝ աշխարհաբար թարգմանութեամբ հանդերձ, ժառ. սան Շնորհք Եաղըրեան մեներգեց «Հանդիսացեալք» շարականը։ Տրց. Արամ կարդաց գրուածք մը՝ նուիրուած սուրբերուն։ Օրուան դասախօսն էր Վարժարանի ուսուցիչներէն Հոգշ. Տ. Արփիար Աբղ. Տէմիրճեան, որմէ ետք Վերատեսուչ Ս. Հայրը ըրաւ փակման խօսքը և օրհնեց աշակերտութիւնը։

Հինգշաբթի, 25 Փետրուարի երեկոյեան, Ս. Վարդանանց զօրավարաց տօնին առթիւ, Վարժարանի ճաշարանին մէջ տեղի ունեցաւ աւանդական ընթրիքը, նախագահութեամբ Ամեն. Ս. Պատրիարք Հօր և ի ներկայութեան Միաբանութեան անդամներուն և ուսուցչական կազմին։ Վերատեսուչ Գերշ. Տ. Շահէ Արքեպս.ի բացման խօսքէն ետք, ժառանգաւոր փոքրիկ սաներ խմբովին երգեցին տօնին շարականը՝ «Նորահրաշ պսակաւոր»։ Ապա մեծեր երգեցին «Իմ հայրենեաց հոգի, Վարդան» երգը, որմէ ետք, յանուն ուսուցչական կազմին, խօսք առաւ Տիար Վարդան Տէր Վարդանեան։ Ընթրիքը փակուեցաւ Սրբազան Պատրիարք Հօր խրախուսիչ խօսքերով և օրհնութեամբ։

digitised by A.R.A.R.@

— — ժամը 2ին, «Հրաշափառ»ով մուտք կատարուեցաւ Ս. Ծննդեան Տաճար։ Հանդիսապետն էր Լուսարարապետ Սրբազան Հայրը, որ նախագահեց նաև մինչև մթնշաղ տևող հանդիսութեանց։ Ճրագալոյցի Ս. Պատարագը Ս. Այրին մէջ մատոյց Հոգշ. Տ. Համբարձում Աբղ. Քէշիշեան։ Կատարուեցաւ նաև նախատօնակ։

● Գշ. 19 Յուն. — ԾՆՈՒՆԴ ԵՒ ԱՍՏՈՒԱԾԱՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ: Կէս գիշերին, Միաբանութիւնը իջաւ Ս. Ծննդեան Այրը՝ Սրբ. Պատրիարք Հօր պատգամը, Նուիրական այդ վայրէն, տեսնել էջ 4–6։ Երուսաղէմի Քաղաքապետը՝ Բեթղեհէմի Քաղաքապետն ու Ոստիկանապետը ներկայ եղան արարողութեանց։ Առաջին Պատարագը, Տաճարի մեր բաժնին մէջ, մատոյց Հոգշ. Տ. Արփիար Աբղ. և քարոզեց։ «Զօրհնեցէք»ին նախագահեց և Ս. Այրին մէջ հանդիսաւոր Ս. Պատարագը մատոյց Գերշ. Տ. Կիւրեղ Եպս. Գաբիկեան։

— — Նախաճաշէն ետք, Միաբանութիւնը վերադարձաւ Երուսաղէմ, ուր հասաւ ժամը Ծին և «Օրհնութիւն» մեծի երգեցողութեամբ բարձրացաւ Պատրիարքարան, ուր Ն. Ամեն. Սուրբ Ծննդեան աւետիսով արձակեց ամէնքը։

— յԵրուսաղէմ, Ճրագալոյցի Պատարագը ի Ս. Յարութիւն, Քրիստոսի Ս. Գերեզմանին վրայ, մատոյց Հոգշ. Տ. Կոմիտաս Աբղ.։ Տաճարի Տեառն Հոգշ. Տ. Վաղարշ Վրդ. նախագահեց Ս. Ծննդեան նախատօնակին։

Երեքշաբթի առաւօտ, ըստ սովորութեան, Ս. Հրեշտակապետաց Վանուց Տեսուչը՝ Հոգշ. Տ. Սևան Վրդ. Ղարիպեան պատարագեց Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ և նախագահեց «Զօրհնեցէք»ի արարողութեան։

— Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Հոգշ. Տ. Վաղարշ Վրդ. Խաչատուրեան։

● Դշ. 20 Յուն. — Յիշատակ մեռելոց: Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ պատարագեց, ըստ սովորութեան, Աւագ Թարգմանը՝ Հոգշ. Տ. Առաքել Վրդ. Գալեան։ Գերշ. Տ. Կիւրեղ Եպս. նախագահեց հանգստեան կարգին, որը կրկնուեցաւ Կիւրեղ Պարք. Հօր շիրմին վրայ։

● Շբ. 23 Յուն. — Ս. Պատարագը ի Սուրբ Յակոբ, Ս. Աճաձնայ խորանին վրայ մատոյց Հոգշ. Տ. Վանիկ Աբղ. Մանկասարեան։

● Կիր. 24 Յուն. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնատան մէջ։ Ժամարարն էր Արժ. Տ. Ներսէս Ա. Քհնյ.։

● Բշ. 25 Յուն. — Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Գերշ. Տ. Շահէ Արքեպս.։

● Գշ. 26 Յուն. — Տօն Անուանակոչութեան Տեառն: Առաւօտուն, Գերշ. Տ. Շահէ Արքեպս. Աճէմեանի գլխաւորութեամբ, Միաբան Հայրեր «Հրաշափառ»ով մուտք գործեցին Ս. Յարութեան Տաճար, ուր Գերշ. Սրբազանը մատոյց օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը՝ Քրիստոսի Ս. Գերեզմանին վրայ։ Վանք դարձին, Հայոց Թաղի մուտքէն, Միաբանութիւնը «Հօլյ» ի լուսոյ» շարականը երգելով յառաջացաւ և բարձրացաւ Պատրիարքարան, ուր Լուսարարապետ Ս. Հօր նախագահութեամբ կատարուեցաւ «Տնօրհնէք»։ Ժամօրհնող Հօր գլխաւորութեամբ նոյնը կրկնուեցաւ ապա Սեղանատան և Խոհանոցին մէջ։ Օրհնուեցաւ նաև ճերմակի ճաշը։

● Դշ. 27 Յուն. — Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Լուսարարապետ Գերշ. Տ. Գարեգին Արքեպս.։

● Եշ. 28 Յուն. — Ծնունդ Յովհաննու Կարապետին: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Կարապետի խորանին վրայ։ Ժամարարն էր Հոգշ. Տ. Ռուբէն Վրդ. Յովակիմեան։

● Շբ. 30 Յուն. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր։ Ժամարարն էր Հոգշ. Տ. Առաքել Վրդ.։

● Կիր. 31 Յուն. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յակոբ, Ս. Աճաձնայ խորանին վրայ։ Ժամարարն էր Հոգշ. Տ. Ռուբէն Վրդ.։

● Շբ. 6 Փետր. — Կ. Պոլսոյ Ս. Ժողովոյն (381): Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր։ Ժամարարն էր Հոգշ. Տ. Առաքել Վրդ.։

● Կիր. 7 Փետր. — Բարեկենդան Առաջաւորի պահոց: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնատան մէջ։ Ժամարարն էր Հոգշ. Տ. Կոմիտաս Աբղ. Շէրպէթճեան։

● Ուր. 12 Փետր. — Յիշատակ Յովնանու մարգարէին: Առաւօտուն, Մայր Տաճարին մէջ, Հոգշ. Տ. Վանիկ Աբղ. կատարեց ընթերցումը Յովնանու Մարգարէութեան Գրքին։

— Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Գերշ. Տ. Շահէ Արքեպս. Աճէմեան։

● Շբ. 13 Փետր. — Ս. Սարգսի զօրավարին: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Գանձատան նախադուռը եղող Ս. Սարգսի մատրան մէջ։ Ժամարարն էր Հոգշ. Տ. Հայրիկ Աբղ. Գալայճեան։ Ապա, Լուսարարապետ Ս. Հայրը նախագահեց, ընկալեալ սովորութեան համաձայն, հանգ. մեծանուն բարերար Գալուստ Կիւլպէնկեանի Նոր Սարգսի հոգւոյն կատարուած հանգստեան պաշտամունքին։

● Կիր. 14 Փետր. — Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ։ Ժամարարն էր Հոգշ. Տ. Սևան Վրդ. Ղարիպեան։ Քարոզեց Լուսարարապետ Գերշ. Տ. Գարեգին Արքեպս. Գազանճեան, ոգեկոչելով յիշատակը Ս. Աթոռոյս նախկին Լուսարարապետ Հայրիկ Արքեպս. Ասլանեանի, անոր մահուան տարելիցին առիթով և նախագահեց հոգեհանգստեան պաշտամունքին, որ կրկնուեցաւ հանգուցեալի շիրմին վրայ՝ Ս. Փրկչի վանուց ներքին գաւիթին մէջ։

● Շբ. 20 Փետր. — Խաչակայ Գէորգեայ զօրավարին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր։ Ժամարարն էր Հոգշ. Տ. Վանիկ Աբեղայ Մանկասարեան։

● Կիր. 21 Փետր. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնատան մէջ։ Ժամարարն էր Հոգշ. Տ. Ոսկի Աբղ. Որդիքեան։

digitised by A.R.A.R.@

● Դշ. 24 Փետր. — Վարդանանց հանդիսաւոր նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Գերշ. Տ. Շահէ Արքեպս.։

● Եշ. 25 Փետր. — Ս. Վարդանանց զօրավարացն մերոց (Յիշատակ մեռելոց եւ տօն ազգային)։ Տե՛ս էջ 26–28։

● Ուր. 26 Փետր. — Ըստ իրաւական սովորութեան, Ս. Պատարագ մատուցուեցաւ Ուղղափառ Ասորւոց Ս. Մարկոս աւետարանչի եկեղեցւոյ մէջ։ Պատարագեց եւ Սուրբ Մարկոսի կեանքին ու նահատակութեան մասին քարոզեց Հոգշ. Տ. Մեսրոպ Արղ. Մութաֆեան։ Ս. Պատարագէն ետք, Միաբանութիւնը պատուասիրուեցաւ Ասորւոց Եպս.ական Փոխանորդէն։ Երթ ու դարձի թափօրները գլխաւորեց Գերշ. Տ. Աղան Եպս. Պալիօզեան։

— Մայր Տաճարին մէջ պաշտուած Տեառնընդառաջի հանդիսաւոր նախատօնակին եւ անոր յաջորդող «Անդաստան»ին նախագահեց Լուսարարապետ Գերշ. Տ. Գարեգին Արքեպս.։

— Գիշերասկիզբին, Մայր Տաճարին մէջ պաշտուած «Եկեղեցէ»ի եւ Հսկման կարգերուն նախագահեց Գերշ. Տ. Կիւրեղ Եպս.։

— «Հսկումէն» ետք, Նախկին ժառ. Վարժարանի դաշտին վրայ կը վառէր Տեառնընդառաջի աւանդական կրակը։

● Եր. 27 Փետր. — Տեառնընդառաջ: Տե՛ս էջ 54 (Քահանայական Ձեռնադրութիւն)։

— Երեկոյեան ժամերգութեան ընթացքին, Մայր Տաճարի խորաններն ու գլխաւոր սրբանկարները վարագուրուեցան։

● Կիր. 28 Փետր. — Բուն Բարեկենդան: Փակեալ-խորանի Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ։ Ժամարարն էր Հոգշ. Տ. Արփիար Արղ. Տէմիրճեան։ Դպրապետի պաշտօնը վարեց Գերշ. Տ. Աղան Եպս. Պալիօզեան։

## ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

● Ուր. 8 Յուն. — Օրթոտոքս Եկեղեցւոյ Ս. Ծննդեան տօնին առիթով, կէսօրէ առաջ, Ամեն. Ս. Պատրիարք Հօր գլխաւորութեամբ, Միաբանութիւնը շնորհաւորական այցի գնաց Յունաց Պատրիարքարան։ Իսկ Գերշ. Տ. Կիւրեղ Եպս., Հոգշ. Հայրերու ընկերակցութեամբ, այցելեց Ասորւոց եւ Հաբէշաց վանքերը։

● Կիր. 17 Յուն. — Ս. Ծննդեան տօնին առիթով, Ս. Աթոռ ժամանեց Ս. Ուխտիս Միաբան եւ Հոլանտայի Հայոց Հոգեւոր Հովիւ Հոգշ. Տ. Նուրհան Վրդ. Մանուկեան եւ մեկնեցաւ Ուրբաթ, 29 Յունուարին։

● Դշ. 20 Յուն. — Մեր Ս. Ծննդեան տօնին առթիւ, կէսօրէ առաջ, Պատրիարքարան այցի եկան յաջորդաբար Լատինաց Պատրիարքը, Ֆրանչիսկեանց Կիւսթոսի փոխանորդը, Յոյն-Կաթոլիկներու եւ Ասորւոց Եպիսկոպոսները՝ իրենց Միաբանութեան անդամներով, Հայ-Կաթոլիկներու, Մարոնիներու, Ղպտաց, Ուսումնարանցւոց եւ Տօրմիսիոն վանքի Մեծաւորները, Լուտերականներու Եպս.ը, Բողոքականները, Ոստիկանապետը եւ Կրօնից Նախարարութեան ներկայացուցիչը։

● Եշ. 21 Յուն. — Նոյն առիթով, Հիւպատոսական կազմը եկաւ այցելութեան։

● Եշ. 28 Յուն. — Ս. Աթոռ ժամանեց Ս. Ուխտիս Միաբան եւ Փասատենայի (Գալիֆ.) Հոգեւոր Հովիւ Հոգշ. Տ. Նարեկ Ծ. Վրդ. Մարֆագէլեան եւ մեկնեցաւ շաբաթ մը ետք։

● Եշ. 11 Փետր. — Պապական Նուիրակը, որ Յունուարին կը բացակայէր Երուսաղէմէն, շնորհաւորութեան եկաւ Պատրիարքարան։

● Կիր. 14 Փետր. — Կէսօրէ առաջ, Սուրբ Մարոնի տօնին առիթով (9 Փետր.), Մարոնիներու վանքի եկեղեցւոյն մէջ, Հարաւային Լիբանանի Առաջնորդ Եուսէֆ Խուրի Եպիսկ.ի կողմէ մատուցուած հանդիսաւոր Ս. Պատարագին եւ ընդունելութեան ներկայ գտնուեցաւ Հոգշ. Տ. Արփիար Արղ. Տէմիրճեան։

● Դշ. 24 Փետր. — Կէսօրէ ետք, Ս. Աթոռ ժամանեց Ս. Ուխտիս Միաբան եւ Սուտանի Հայոց Նորընտիր Առաջնորդ Հոգշ. Տ. Յովսէփ Ծ. Վրդ. Սամսուր եւ մեկնեցաւ Բշ. 1 Մարտին։

## ՀԱՅԿՈՒՀԻ ՄԱՅՐԱՊԵՏ ՊԷՃԻՐԵԱՆ

Շաբաթ, 9 Յունուարի երեկոյեան, իր յաւիտենական հանգիստը մտաւ Սուրբ Աթոռոյս Մայրապետներէն Քոյր Հայկուհի Պէճիրեանը, Ապու Տիօրի ծերանոցին մէջ՝ ուր փոխադրուած էր քանի մը ամիսներ առաջ, յառաջացեալ տարիքի բերումով։

Հայկուհի Մայրապետ ծնած է Կ. Պոլիս 1901ին։ 1965ին Երուսաղէմ գալով, մտած է Ս. Աթոռոյս Մայրապետաց շարքը։

Հանգուցեալին յուղարկաւորութիւնը կատարուեցաւ յաջորդ կէսօր, տրուած ըլլալով որ կէսօրէ ետք Որդւոց Որոտման տօնին առիթով «Հրաշափառ»ի հանդէս կար ի Ս. Յակոբ։ Զարչարանաց խորանին առջեւ կատարուած արարողութեան աւարտին, Ս. Հրեշտակապետաց Վանուց Տեսուչ Հոգշ. Տ. Սեւան Վրդ.ի գլխաւորութեամբ, Միաբան Հայրերու թափօրը առաջնորդեց վախճանեալ Քրոջ դագաղը դէպի իր վերջին հանգստավայրը՝ Ս. Փրկչի ազգ. գերեզմանատունը։

Հանգուցեալը տարիներով եղած է պահապանը Քրիստոսի Բանտի մատրան։ Հեզահոգի ու բարեկրօն Մայրապետ մը՝ իր գերագոյն մխիթարութիւնը Եկեղեցւոյ ծառայութեան ու ժամասացութեանց մէջ փնտռած։

«Հանգիստ իր ցաւատանջ ոսկորներուն եւ բարի հոգիին։

digitised by A.R.A.R.@